Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-510-10.02.2023-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ գլխի վերնագրում «ԱՏԵՍՏԱՎՈՐԵԼԸ» բառը փոխարինել «ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ» բառով:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից «ատեստավորման արդյունքում» բառերը հանել,

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է պետական լիազոր մարմնի համապատասխան ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից պետական լիազոր մարմնի ղեկավարին ներկայացված հիմնավոր զեկուցագրի հիման վրա, որը պետք է պարունակի տվյալ ծառայողի գործնական և անձնական հատկանիշների, կարգապահության, ծառայակիցների հետ փոխհարաբերությունների, ծառայության ընթացքում ունեցած ձեռքբերումների, խրախուսանքների, կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման որակի և մասնագիտական հմտությունների ու վերջինիս կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:»,

3) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքում՝ մինչև 2 ամիս ժամանակով:»,

3) 2-րդ մասում «1-ին և 3-րդ» բառերը փոխարինել «1-ին, 3-րդ և 7-րդ» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ազգային անվտանգության մարմինները պարտավոր են ծառայողին՝ նրա կրթությանը և նախկինում զբաղեցրած պաշտոնի խմբին կամ դրանից մեկ աստիճան ցածր խմբին համապատասխանող պաշտոն առաջարկել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու սահմանված ժամկետը լրանալուց հետո ծառայողը, սույն օրենքով սահմանված կարգով, արձակվում է ծառայությունից:»:

Հոդված 5. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետից «ատեստավորման արդյունքների հիման վրա» բառերը հանել,

2) 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 28. Ծառայողների ատեստավորումը**

1. Ազգային անվտանգության մարմիններում գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ (սույն հոդվածում այսուհետ՝ համապատասխան պաշտոն) զբաղեցնող ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով անցկացվում է ատեստավորում (այսուհետ՝ ատեստավորում):

2. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ: Ատեստավորման՝ սույն հոդվածով սահմանված կարգը տարածվում է նաև ազգային անվտանգության մարմինների շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների վրա:

3. Ատեստավորման անցկացման նպատակով պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

4. Համապատասխան պաշտոնի առաջին անգամ, ինչպես նաև առաջխաղացման կարգով նշանակվող ծառայողները ենթակա են ատեստավորման պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

5. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողները ենթակա են ատեստավորման յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար:

6. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո:

7. Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

8. Ատեստավորման ենթակա չեն ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները:

9. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

10. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու:

11. Ատեստավորում անցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված եզրակացությունը, դրան ծանոթանալու պահից մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ կարող են դիմել նոր ատեստավորում անցնելու համար, որի արդյունքներով սույն հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը կայացվելու դեպքում, հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

12. Նոր ատեստավորումը երկրորդ անգամ անցնող այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նոր ատեստավորում անցնելու համար չդիմած ծառայողներն ազատվում են զբաղեցրած համապատասխան պաշ-տոնից:

13. Ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը վերադասության կարգով՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

14. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝

1) հերթական ատեստավորման արդյունքում սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված եզրակացություն կայացվելու դեպքում.

2) ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակվելիս.

3) բարձրագույն խմբի պաշտոնի նշանակվելիս:

15. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Հավելավճարի հաշվարկման կարգը սահմանվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում: Սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված դեպքերում ծառայողներին հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները:»:

Հոդված 7. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «6-10-րդ» բառերը փոխարինել «6-9-րդ» բառերով:

Հոդված 8. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածի 2-րդ և 15-րդ մասերով նախատեսված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին ազգային անվտանգության մարմիններում պաշտոններ զբաղեցնող ծառայողները սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածով նախատեսված ատեստավորմանն առաջին անգամ մասնակցում են կամավոր: Սույն մասով նախատեսված և կամավոր ատեստավորում չանցած ծառայողները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան այլ պաշտոնի նշանակվելու դեպքում ենթակա են ատեստավորման ընդհանուր հիմունքներով՝ պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ » ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-532-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ գլխի վերնագրում «ԱՏԵՍՏԱՎՈՐԵԼԸ» բառը փոխարինել «ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ» բառով:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից «ատեստավորման արդյունքում» բառերը հանել,

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է պետական լիազոր մարմնի համապատասխան ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կողմից պետական լիազոր մարմնի ղեկավարին ներկայացված հիմնավոր զեկուցագրի հիման վրա, որը պետք է պարունակի տվյալ ծառայողի գործնական և անձնական հատկանիշների, կարգապահության, ծառայակիցների հետ փոխհարաբերությունների, ծառայության ընթացքում ունեցած ձեռքբերումների, խրախուսանքների, կարգապահական տույժերի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման որակի և մասնագիտական հմտությունների ու վերջինիս կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:»,

3) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքում՝ մինչև 2 ամիս ժամանակով:»,

3) 2-րդ մասում «1-ին և 3-րդ» բառերը փոխարինել «1-ին, 3-րդ և 7-րդ» բառերով,

~~3)~~ ***4)*** լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ազգային անվտանգության մարմինները պարտավոր են ծառայողին՝ նրա կրթությանը և նախկինում զբաղեցրած պաշտոնի խմբին կամ դրանից մեկ աստիճան ցածր խմբին համապատասխանող պաշտոն առաջարկել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու սահմանված ժամկետը լրանալուց հետո ծառայողը, սույն օրենքով սահմանված կարգով, արձակվում է ծառայությունից:»:

Հոդված 5. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետից «ատեստավորման արդյունքների հիման վրա» բառերը հանել,

2) 7-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքում:»:

Հոդված 6. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 28.** ~~Պետական սահմանի պահպանության կամ հետախուզական կամ հակահետախուզական կամ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման կամ հատուկ առաջադրանքների~~

~~կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող ծառայողների~~ ***Ծառայողների*** **ատեստավորումը**

1. Ազգային անվտանգության մարմիններում ~~պետական սահմանի պահպանության կամ հետախուզական կամ հակահետախուզական կամ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման կամ հատուկ առաջադրանքների կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող~~ ***գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի*** պաշտոններ (սույն հոդվածում այսուհետ՝ համապատասխան պաշտոն) զբաղեցնող ծառայողներին հավելավճար հաշվարկելու նպատակով անցկացվում է ատեստավորում (այսուհետ՝ ատեստավորում):

2. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ: ~~Համապատասխան պաշտոնների անվանացանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:~~ Ատեստավորման՝ սույն հոդվածով սահմանված կարգը տարածվում է նաև ազգային անվտանգության մարմինների շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների վրա:

3. Ատեստավորման անցկացման նպատակով պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

4. Համապատասխան պաշտոնի առաջին անգամ***, ինչպես նաև առաջխաղացման կարգով*** նշանակվող ծառայողները ենթակա են ատեստավորման պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

5. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողները ենթակա են ատեստավորման յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար:

6. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո:

7. Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

8. Ատեստավորման ենթակա չեն ազգային անվտանգության մարմինների ծառայողների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները:

9. Ատեստավորման ենթակա ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

10. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու:

11. Ատեստավորում անցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված եզրակացությունը, դրան ծանոթանալու պահից մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան երկու անգամ կարող են դիմել նոր ատեստավորում անցնելու համար, որի արդյունքներով սույն հոդվածի 10-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը կայացվելու դեպքում, հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

12. Նոր ատեստավորումը երկրորդ անգամ անցնող այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում նոր ատեստավորում անցնելու համար չդիմած ծառայողներն ազատվում են զբաղեցրած համապատասխան պաշտոնից:

13. Ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Ծառայողն իրավունք ունի ~~վերադասության կարգով~~ բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը ***վերադասության կարգով՝*** դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

14. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է՝

1) ~~սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված այլ պաշտոնի նշանակվելիս~~ ***հերթական ատեստավորման արդյունքում սույն հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով նախատեսված եզրակացություն կայացվելու դեպքում.***

2) ծառայության մեջ առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի նշանակվելիս.

3) բարձրագույն խմբի պաշտոնի նշանակվելիս:

15. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Հավելավճարի հաշվարկման կարգը սահմանվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում: Սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված դեպքերում ծառայողներին հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները:»:

Հոդված 7. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «6-10-րդ» բառերը փոխարինել «6-9-րդ» բառերով:

Հոդված ~~7~~8. Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~8~~9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածի 2-րդ և 15-րդ մասերով նախատեսված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ 2 ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին ազգային անվտանգության մարմիններում ~~պետական սահմանի պահպանության կամ հետախուզական կամ հակահետախուզական կամ օպերատիվ հետախուզական գործունեության իրականացման կամ հատուկ առաջադրանքների կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող~~ պաշտոններ զբաղեցնող ծառայողները սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածով նախատեսված ատեստավորմանն առաջին անգամ մասնակցում են կամավոր: ***Սույն մասով նախատեսված և կամավոր ատեստավորում չանցած ծառայողները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան այլ պաշտոնի նշանակվելու դեպքում ենթակա են ատեստավորման ընդհանուր հիմունքներով՝ պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո:***

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-510-10.02.2023-ՊԱ-011/0) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-510[1]-10.02.2023-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման հեղինակը)	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-510-10.02.2023-ՊԱ-011/0)					
1.	**Կառավարություն** **և** **ՀՀ ԱԺ պատգամավոր Անդրանիկ Քոչարյան**	**Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետ**	Նախագծի համաձայն, եթե համապատասխան ծառայողի վերաբերյալ կայացվել է «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» մասին եզրակացությունը, և դրան ծանոթանալու պահից մեկ տարվա ընթացքում ևս երկու անգամ համապատասխան ծառայողի վերաբերյալ կայացվում է նույն՝ «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» մասին եզրակացությունը, ինչպես նաև, եթե մեկ տարվա ընթացքում համապատասխան ծառայողը նոր ատեստավորում անցնելու համար չի դիմում, այդ հիմքով նա թողնվում է կադրերի տրամադրության տակ: Այս առումով անհրաժեշտ է սահմանել, թե որքան ժամանակ և ինչ չափով է վարձատրվելու նշված ծառայողը կադրերի տրամադրության տակ գտնվելու ընթացքում:	Ընդունվել է: Հոդվածը լրացվել է նոր՝ 3-րդ կետով, որի համաձայն կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում՝ մինչև 2 ամիս, ծառայողին վճարվելու է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն և** **ՀՀ ԱԺ պատգամավորներ** **Անդրանիկ Քոչարյան և Քրիստինե Պողոսյան**	**Նախագծի 6-րդ հոդված**	Առաջարկվում է նոր խմբագրվող 28-րդ հոդվածում չառանձնացնել ատեստավորման ենթակա պաշտոնների գործառույթների որոշակի շրջանակ, քանի որ հավելավճար հաշվարկելու նպատակով անցկացվող ատեստավորմանը մասնակցելու	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			իրավունքից պետք է հավասարապես օգտվեն համակարգի բոլոր զինծառայողները՝ բացառելով հայեցողական մոտեցումը: Փոփոխություն կատարելու դեպքում անհրաժեշտ կլինի հանել նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունը, 14-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև խմբագրել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի համապատասխան դրույթները:		
3.	**Կառավարություն և** **ՀՀ ԱԺ պատգամավոր Անդրանիկ Քոչարյան**	**Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մաս**	Հաշվի առնելով, որ Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ բարձր պաշտոնի նշանակվելը հավելավճար չստանալու հիմք է, անհրաժեշտ է սահմանել, թե այս դեպքում ինչ կարգով և ժամկետներում ծառայողը կարող է ատեստավորվել հավելավճար հաշվարկելու նպատակով: Առաջարկվում է նախատեսել համանման կարգավորումներ, ինչպիսիք նախագծով սահմանված են համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակվող ծառայողների համար, մասնավորապես, սահմանել, որ վերջիններս ենթակա են ատես-տավորման բարձր պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:	Ընդունվել է: Նախագծի 6-րդ հոդվածով խմբագրվող 28-րդ հոդվածի 4-րդ մասում լրացվել են «, ինչպես նաև առաջխաղացման կարգով» բառերը:	Ընդունվել է:
4.	**Կառավարություն**	**Նախագծի 6-րդ հոդվածի 13-րդ մաս**	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 28-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված դրույթի շարադասությունն անհրաժեշտ է վերանայել, որպեսզի հստակ տարանջատվի բողոքարկման իրավունքը՝ վերադասության և դատական կարգով:	Ընդունվել է: Կատարվել է համապա-տասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	**Կառավարություն**	**Նախագծի 6-րդ հոդվածի 14-րդ**	Առաջարկվում է լրամշակել հավելավճարի վճարումը դադարեցնելու առաջին հիմքը, սահմանելով նաև, որ	Ընդունվել է: Կատարվել է համապա-	Ընդունվել է:

		մաս **1-ին կետ**	հերթական ատեստավորման արդյունքում ենթակա չէ հավելավճար հաշվարկելու եզրակացությունը կայացվելու դեպքում ևս հավելավճարի վճարումը կդադարեցվի:	տասխան փոփոխություն:	
5.	**Կառավարություն**	**Նախագծի նոր 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով (նոր խմբ.՝ 8-րդ) ուժը կորցրած է ճանաչվում Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը: Հետևաբար անհրաժեշտ է նաև խմբագրել Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որով հղում է կատարվում 47-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին:	Ընդունվել է: Նախագիծը լրացվել է նոր՝ 7-րդ հոդվածով՝ կատարելով համապա-տասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	**Կառավարություն**	**Նախագծի 8-րդ (նոր խմբ.՝ 9-րդ) հոդվածի 3-րդ մաս**	Նախագծի 8-րդ (նոր խմբ.՝ 9-րդ) հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե օրենքն ուժի մեջ մտնելու պահին համապատասխան պաշտոններ զբաղեցնող ծառայողները երբ են առաջին անգամ ատեստավորում անցնելու, որ պահից սկսած է ատես-տավորումը նրանց համար կամավորից դառնում պարտադիր:	Ընդունվել է: Կատարվել է համապա-տասխան լրացում՝ նախատեսելով, որ ատեստավորում չանցած ծառայողները օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան այլ պաշտոնի նշանակվելու դեպքում ենթակա են ատեստավորման ընդհանուր հիմունքներով՝ պաշտոնի նշանակվելու օրվանից ոչ շուտ, քան երեք և ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Հաշվի առնելով նախագծի կարգավորումները՝ առաջին անգամ ատեստավորվելուց հետո այն դառնում է պարտադիր:	Ընդունվել է:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-510[1]-10.02.2023-ՊԱ-011/0)					
1.	**Կառավարություն** **ՀՀ ԱԺ պատգամավորներ** **Անդրանիկ Քոչարյան և Քրիստինե Պողոսյան**	**Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածներ**	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում առաջարկվող փոփոխությամբ պայմանավորված, որով հանվելու է ատեստավորման ենթակա պաշտոնների գործառույթների շրջանակը, ահնրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև մյուս օրինագծի բոլոր հոդվածներում:	Ընդունվել է: Դրույթները խմբագրվել են:	Ընդունվել է: